ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար,Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 փետրվար 2016 թվականի N 05-Ա

## ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝ ավագանին որոշեց.

Հաստատել համայնքի ավագանու թիվ 02 արտահերթ նիստի օրակարգը:

1.ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

/զեկ. Ս.Թ.Գրիգորյան/

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ
2. ԲՈՒԴՈՒՄՅԱՆ ՄԱՑԻՍ
3. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ԶԱՎԵՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆՎԵՐ
6. ՄԻՆԱՍՅԱՆ ՀՈՎԻԿ
7. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.Թ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար,Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
23 փետրվար 2016 թվականի N 06-Ն

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով քաղ. Արմեն Սուրիկի Գրիգորյանի դիմումը վարձակալության իրավունքով իրեն պատկանող Ավշար համայնքի կադաստրային քարտեզի 03-013-0547-0006 ծածկագրում գտնվող 3.0 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության գյուղ այլ հողը նախապատվության իրավունքով իրեն վաճառելու մասին, ինչպես նաև առաջնորդվելով հողամասի վարձակալության մասին պայմանագրի (գրանցված սեղանամատյան 1913, կնքված հուլիսի 18-ին 2014 թվական) 4.7 կետի պահանջներով .

1.Վարձակալության իրավունքով քաղ. Արմեն Սուրիկի Գրիգորյանին տրամադրված Ավշար համայնքի կադաստրային քարտեզի 03-013-0547-0006 ծածկագրի գյուղատնտեսական նպատակային նշանակության, գործառնական նշանակությամբ գյուղ այլ 3.0 հա հողամասը գնման նախապատվության իրավունքով , ուղղակի վաճառքով օտարել վարձակալին տվյալ հողամասի կադաստրային արժեքով, որը կազմում է 172.500 (մեկ հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր) հհ դրամ և կնքելու օտարման պայմանագիր:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ
2. ԲՈՒԴՈՒՄՅԱՆ ՄԱՅԻՍ
3. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ԶԱՎԵՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆՎԵՐ
6. ՄԻՆԱՍՅԱՆ ՀՈՎԻԿ
7. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.Թ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՎՇԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ավշար համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Ավշար,Անդրանիկի 1
Հեռախոս (0234) 45314, (0234) 45179, avshar.ararat@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

23 փետրվար 2016 թվականի N 07-Ն

## ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 81-րդ հոդվածի 3-րդ կետի, հողի հարկի մասին օրենքի 5-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 24 դեկտեմբերի 2003 թվականի թիվ 1746 –Ն որոշման 2-րդ կետի բ/ և ե/ ենթակետերի պահանջներով, ինչպես նաև առաջնորդվելով Ավշար համայնքի ավագանու 16 ապրիլի 2014 թվականի թիվ 03 արձանագրության թիվ 08-Ն որոշման արձանագրային մասի որոշ դրույթներով, հարգելով բնական քարերի մշակման արտադրամասի աշխատողներին , հաշվի առնելով, որ ընկերությունը չի կարող աշխատել 20% վարձավճարի դեպքում և ելնելով համայնքի շահերից «Մանանա Գրեյն » ՍՊ Ընկերության կողմից արդյունաբերության և ընդերքօգտագործման համար օգտագործվող 11.3 հա հողամասի համար սահմանել նոր վարձավճարի չափ`

1. Ավշար համայնքի ավագանու 16 ապրիլի 2014 թվականի թիվ 03 արձանագրության թիվ 08 որոշմամբ հաստատված վարձավճարի չափը` 20%-ը թողնել անփոփոխ:
2. 20% որոշված վարձավճարի չափը չի գործում «Մանանա Գրեյն» ՍՊ Ընկերության վարձավճարի դեպքում:
3. «Մանանա Գրեյն» ՍՊ ընկերության համար նոր վարձավճարի չափ սահմանել արդյունաբերության և ընդերքօգտագործման նպատակային նշանակության հողի կադաստրային արժեքի 6%-ի չափով :
4. Ընկերության հետ կնքել լրացուցիչ համաձայնագիր 11.3 հա հողամասի վրա հանքարդյունահանություն կազմակերպելու համար և առաջնորդվել Հայաստանի Հանրապետության «Ընդերքի մասին » օրենսգրքի 17-րդ հոդվածի պահանջներով:
5. Ի պատասխան «Մանանա Գրեյն» ՍՊ ընկերության դիմումների, սույն որոշման քաղվածքը ուղարկել ընկերության տնօրենին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԿԱՌԼԵՆ
2. ԲՈՒԴՈՒՄՅԱՆ ՄԱՑԻՍ
3. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՍՄԲԱՏ
4. ՀԱԿՈԲՅԱՆ ԶԱՎԵՆ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆՎԵՐ
6. ՄԻՆԱՍՅԱՆ ՀՈՎԻԿ
7. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.Թ. ԳՐԻԳՈՐՅԱՆ